Զիդին **16** մգ

Դեղաձև. հեստոցային մոմիկներ 16 մգ:

Բաղադրություն. 1 մոմիկը պարունակում է ակտիվ նյութ՝ ֆլորհեքսիդին բիգլյուկոնատ 16 մգ:
Օժանդակ նյութեր . հիմք մոմիկների համար. պոլիէթիլենօքսիդ 400 և պոլիէթիլենօքսիդ 1500:

Դեղաբանական խումբ. հականեխիչ դեղամիջոց տեղային օգտագործման համար:

Դեղաբանական ազդեցություն

Զիդինը համարվում է հականեխիչ դեղամիջոց տեղային կիրառման համար, արդյունավետ է գրամդրական և գրամբացասական միկրոօրգանիզմների հանդեպ. Treponema pallidum, Chlamydia spp., Ureaplasma spp., Neisseria gonorrhoeae, Trichomonas vaginalis, Gardnerella vaginalis, Bacteroides fragilis, Herpes virus: Դեղի հանդեպ թույլ զգայուն են որոշ շտամներ Pseudomonas spp., Proteus spp., նաև կայուն են թթվակայուն բակտերիաների նրանց սպորների, սնկերի և վիրուսների հանդեպ: Զիդինը չի ընկճում լակտոբակտերիաների ֆուկցիոնալ ակտիվությունը: Պահպանում է որոշակի ակտիվություն արյան և թարախի առկայության դեպքում: Պրակտիկորեն չի ներծծվում ստամոքսաղիքային համակարգից: Պատահական կուլ տալու դեպքում 300 մգ Cmax հասնում է 30 րոպե հետո և կազմում է 0,206 մկգ/լ: Արտազտվում է հիմնականում կղանքով (90%), 1 %-ից ֆիչ արտազատվում է երիկամներով: Ներհեստոցային կիրառման ժամանակ պրակտիկորեն չի ներծծվում և համակարգային ազդեցություն չի ցուցաբերում:

Կիրառման ցուցումներ

- Վեներական հիվանդությունների կանխարգելման ժամանակ. գոնորեա, սիֆիլիս, տրիխոմոնիազ, գարդներելիոզ, խլամիդիոզ և ուրեոպլազմոզ: Զիդինի կիրառումը կանխարգելման նպատակով անհրաժեշտ է կատարել չպաշտպանված սեռական ակտից հետո 2 ժամվա ընթացքում, քանի որ 2 ժամ անց հարուցիչը ներթափանցում է հեստոցի լորձաթաղանթի բջջի մեջ և ֆլորհեքսիդինի հանդեպ դառնում է անհասանելի:
- Ինֆեկցիոն բորբոքային բարդությունների առաջացման կանխարգելման նպատակով մանկաբարձա-գինեկոլոգիական միջամտությունների ժամանակ, ծննդաբերություններից և աբորտներից առաջ, գինեկոլոգիական հիվանդությունների վիրահատական միջամտությունից առաջ, ՆԱՊ-ի դնելուց առաջ և հետո, արգանդի պարանոցի դիոթերմոկոագուլյացիայից առաջ և հետո, ներարգանդային հետազոտություններից առաջ:
- Խրոնիկական էնդո- և էկզոցերվիցիտների բուժում, սպեցիֆիկ և ոչ սպեցիֆիկ վագինիտներ, գրգռիչների բազմաբաղադրիչ բաղադրությամբ:

Հակացուցումներ

Գերզգայունություն ակտիվ նյութի կամ օժանդակ նյութերից որևէ մեկի հանդեպ:
Մինչև 18 տարեկան երեխաներ:

Կիրառման ձև և դեղաչափում

Կիրառումից առաջ մոմիկը հանել խցիկից:

Բուժման նպատակով. 1 մոմիկից օրը 2 անգամ (առավոտյան և երեկոյան) 7-10 օր:

Ըստ անհրաժեշտության հնարավոր է բուժման ընթացքի երկարացում մինչև 20 օր:

Սեռական ճանապարհով փոխանցվող ինֆեկցիաների կանխարգելման նպատակով. 1մոմիկ չպաշտպանված սեռական հարաբերությունից հետո 2 ժամվա ընթացքում:

Կողմնակի երևույթներ

Հնարավոր են ալերգիկ ռեակցիաներ, քոր, դեղը կիրառումը դադարեցնելուց հետո երևույթները անհետանում են:

Նախազգուշացումներ

Զիդինը անհամատեղելի է անիոնային խումբ պարունակող դետերգենտների հետ (սապոնիններ, նատրիումի լաուրիլսուլֆատ, նատրիումի կարբոքսիմեթիլցելյուլոզ) և օճառի հետ, եթե այն կիրառվում է ներհեշտոցային: Արտաքին սեռական օրգանների հիգիենիկ խնամքը չի ազդում Զիդինի մոմիկների արդյունավետության և կիրառման վրա: Չի թույլատրվում միաժամանակյա օգտագործումը յոդի հետ:

Հղիություն և կրծքով կերակրում

Զիդինի օգտագործումը հղիության և կրծքով կերակրման ժամանակ հակացուցված չէ, քանի որ Զիդինը ազդում է տեղային հեշտոցի վրա, պրակտիկորեն չի ներծծվում:

Զիդինի օգտագործումը հղիության և կրծքով կերակրման ժամանակ հնարավոր է միայն մոր համար սպասվող օգուտի և պտղի և երեխայի համար ռիսկի մանրակրկիտ գնահատումից հետո:

Թողարկման ձև

10 հեշտոցային մոմիկ խցիկում, 2 խցիկ ներդիր թերթիկով տուփում:

Պիտանիության ժամկետ

2 տարի:

Պահպանման պայմաններ

Պահել չոր, լույսից պաշտպանված և երեխաների համար անհասանելի վայրում, 25°C-ից ոչ բարձր ջերմաստիճանում:

Բացթողման կարգ

Առանց դեղատոմսի: